ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » ---------- 2014թ. N -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 622-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 396-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերությամբ և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու, Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին լիազորություններ վերապահելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 359-Ն և 2012 թվականի փետրվարի 14-ի N 397-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 622-Ն որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

19 մարտի 2013թ. N 622-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 359-Ն ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 397-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է***.

1. Երևան քաղաքի այն բազմաբնակարան շենքերում, որոնցում ձևավորված չեն կառավարման մարմիններ, բացառությամբ՝ Երևան քաղաքի Արաբկիր, Դավթաշեն և Նոր Նորք վարչական շրջանների, ինչպես նաև սույն որոշման 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության չընտրվելու (գնումները չկայանալու) կամ գնման պայմանագիրը լուծվելու կամ անվավեր ճանաչվելու դեպքերում՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 19-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ մասերով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին:

2. Երևան քաղաքի Արաբկիր, Դավթաշեն և Նոր Նորք վարչական շրջաններում աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու, ինչպես նաև այդ վճարը համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ գանձելու (մուտքագրելու) լիազորությունները՝ մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, վերապահել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված կազմակերպությանը:

3. Երևան քաղաքի այն բազմաբնակարան շենքերում, որոնցում ձևավորված են կառավարման մարմիններ՝ աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու, ինչպես նաև այդ վճարը համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ գանձելու (մուտքագրելու) լիազորությունները, բացառությամբ՝ Երևան քաղաքի Արաբկիր, Դավթաշեն և Նոր Նորք վարչական շրջանների, վերապահել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին:

4. Երևան քաղաքի Աջափնյակ, Ավան, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու, ինչպես նաև այդ վճարը համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ գանձելու (մուտքագրելու) լիազորությունները, բացառությամբ բազմաբնակարան շենքերի, մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ վերապահել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված կազմակերպությանը:

5. Երևանի քաղաքային համայնքի բյուջե աղբահանության վճար գանձելու լիազորություններն առավել արդյունավետ կազմակերպելու համար.

1) սույն որոշման 2-րդ և 4-րդ կետերում նշված կազմակերպության հետ կնքվող պայմանագրում, որպես մատուցած ծառայության գին, նախատեսել վերջիններիս կողմից գանձված գումարների 10% չափով գումար:

2) Երևան քաղաքի բյուջեից Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին կարող է տրամադրվել վերջիններիս կողմից գանձված գումարների 10% չափով նվիրատվություն:

6. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին լիազորություններ վերապահելու մասին» N 359-Ն և 2012 թվականի փետրվարի 14-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» N 397-Ն որոշումները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի փետրվարի 14-ի «Նվիրատվություն տրամադրելու մասին» N 396-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 622-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 396-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N 622-Ն որոշմամբ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 19-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ մասերով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակվել են Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին, նշված օրենքով նախատեսված լիազորությունների իրականացումը վերապահվել է բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին, իսկ Արաբկիր և Նոր Նորք վարչական շրջաններում իրականացվել են փորձնական ծրագրեր:

Երևան քաղաքի Արաբկիր և Նոր Նորք վարչական շրջաններում աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու, ինչպես նաև այդ վճարը համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ գանձելու (մուտքագրելու) լիազորությունների վերապահումը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված կազմակերպություններին տվել է դրական արդյունք:

Հաշվի առնելով վերը նշված վարչական շրջաններում իրականացված փորձնական ծրագրերի դրական արդյունքները՝ առաջարկվում է նման ծրագրեր իրականացնել մյուս վարչական շրջաններում, որոշ վերապահումներով, որոնք ներկայացված են նախագծով:

Քննարկման ներկայացված նախագծով կարգավորվում են նաև այն հետևանքներն, որոնք կապված են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության չընտրվելու (գնումները չկայանալու) կամ գնման պայմանագիրը լուծվելու կամ անվավեր ճանաչվելու դեպքերի հետ:

Վերապահված լիազորություններն առավել արդյունավետ իրականացնելու համար առաջարկվում է որոշման նախագծի 2-րդ և 4-րդ կետերում նշված կազմակերպության հետ կնքվող պայմանագրում, որպես մատուցած ծառայության գին, նախատեսել վերջիններիս կողմից գանձված գումարների 10% չափով գումար և Երևան քաղաքի բյուջեից Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին տրամադրել վերջիններիս կողմից գանձված գումարների 10% չափով նվիրատվություն, որի հետևանքով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի փետրվարի 14-ի N 396-Ա որոշումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N 622-Ն որոշման մեջ կատարվող փոփոխություններն ու լրացումները ծավալուն են, անհրաժեշտություն է առաջանում Երևան քաղաքի ավագանու վերը նշված որոշումն ամբողջությամբ շարադրել նոր խմբագրությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 622-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 396-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2003 թվականի մարտի 19-ի N 622-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի փետրվարի 14-ի N 396-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 622-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 396-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2003 թվականի մարտի 19-ի N 622-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի փետրվարի 14-ի N 396-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ